պելու եայլն) միջոցներով մրցեցան, մինչեւ իսկ մէկն յաջողեցաւ մեքենայով ալ տպել եազմաները․ սակայն եւրոպական փայլուն եազման ալ վերջապէս իր սարօքն իր կանոնաւոր տեղն ունեցաւ Կ. Պոլսոյ եւ Սկիւտարի եազմաներու տուրեւառին քով՝ եւրոպացի վաճառական-ներու եւ հայ վաճառողներու ձեռքով։

Եազմայի գործը 70-80 տարիէ ի վեր Հայո՛ց ձեռքն էր, եւ անկէ զատ՝ Սամաթիա Սկիւտար եւ այլուր բաց-ուած էին ընդարձակատարր գործարաններ՝ պասմախանէ անունով՝ ընկերութեան մը միջոցով, ուր տեղական եազ-մայի հետ կը գործուէին նաեւ ֆուտճու, չէֆէ, սէվաճի, ստռֆա, որ հին հրապարակին բանուկ վաճառքն էին։

Կեդրոն Կ. Պոլսոյ հրապարակէն՝ գլխաւորապէս Անգղիայի վաճառք կը սփռուէին՝ երկթեւ ուղղու-թեամբ եւ գաւառական գլխաւոր վայր ու քաղաք Ադ-րիանուպոլսոյ, Սելանիկի, Սոֆիայի, Մանասդըրի, Ռուս-ճուգի, Ֆիլիպէի, Վառնայի, Պրուսայի, Զմիւռնայի, Նի-կոմիդիայի, Կիւրինի, Կեսարիայի, Կարինի, Սեբաստիայի, Թօքաթի, Բաղէշի, Վանի, Կիլիկիայի եւ Տրապիզոնի միջոցով՝ Րումէլիի եւ Անատոլույի մէջ. Րումէլի՝ մեծ մասով լաւ եւ կանխիկ վճարող՝ կը գնէր, բաց ի ամե-րիգանի ու ճերմակեղէնի եւ ներկուածներու տեսակներէ, պասմայի լուրջ եւ մանրկոտ զուսպ տեսակներ՝ ընդ-հանրապէս պէթ րէնկ բռուածները, մանրկոտ մոռ եւ պալ րէնկլի պասմայ, մանրկոտ սադըզալի, հինգ գոյն՝ մանրկոտ եւ էլվան ու ճերմակ յատակներու վրայ, բիքէ, եռագոյն ծողկեւորներ, մեծաքանակ բեմպէ, երկգոյն ճերմակ՝ մանաւանդ Կրաֆթընի Բոթըրի եւ Շուապլի, մթագոյն եւ միշտ մանրածաղիկ էլվաններ՝ խրիսփիաճ չէշիտի բռուած, իրենց ժուժկալ եւ պարզուկ ներդաշնա-կութեանց համար, եայլն եայլն։